ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ

Ս Տ Ա Ն Դ Ա Ր Տ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԱԿ-Ի ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈՂՄԻՑ, ԺՆԵՎ, 1955 ԹՎԱԿԱՆ

ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1957 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի 663 C (XXIY) ԵՎ 1977 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի 2076 (LXII) ԲԱՆԱՁԵՎԵՐՈՎ

Տնտեսական և սոցիալական խորհուրդը

1. հավանություն է տալիս Հանցագործությունների կանխմանն ու հանցագործների հետ վարվեցողությանը նվիրված Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսի հաստատած բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններին (37).

2. կառավարությունների ուշադրությունը հրավիրում է այդ Կանոնների վրա և հանձնարարում՝

ա) բարյացակամորեն վերաբերվել դրանց ընդունմանն ու կիրառմանը պատժիչ և ուղղիչ հաստատություններում.

բ) յուրաքանչյուր հինգ տարին մեկ Գլխավոր քարտուղարին իրազեկ պահել այդ կանոնների կիրառման մասին.

գ) միջոցներ ձեռնարկել այդ Կանոնները հնարավորին չափ ավելի լայնորեն հրապարակելու ոչ միայն համապատասխան կառավարական հիմնարկների, այլև սոցիալական պաշտպանությամբ շահագրգռված ոչ կառավարական կազմակերպությունների շրջանում.

3. Գլխավոր քարտուղարին լիազորում է անհրաժեշտ պարագայում հրապարակել 2 բ կետի համաձայն ստացված հաղորդումները և խնդրել լրացուցիչ տեղեկություններ, եթե դա անհրաժեշտ լինի:

994-րդ լիագումար նիստ, 31 հուլիսի 1957 թվականի

1. ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԿԱՆՈՆՆԵՐ

Բանաձևն ընդունվել է 1955 թվականի օգոստոսի 30-ին

Հանցագործությունների կանխմանն ու հանցագործությունների հետ վարվեցողությանը նվիրված Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսը՝

ընդունելով բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները, որոնք կցվում են սույն բանաձևին,

1. Գլխավոր քարտուղարին խնդրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 415 (Y) բանաձևի հավելվածի (դ) կետին համապատասխան այդ կանոնները ներկայացնել Տնտեսական ու սոցիալական խորհրդի Սոցիալական հանձնաժողովի հաստատմանը.

2. հույս է հայտնում, որ այս կանոնները կհաստատվեն Տնտեսական ու սոցիալական խորհրդի կողմից և եթե Խորհուրդն անհրաժեշտ համարի՝ Գլխավոր ասամբլեայի կողմից, և որ դրանք կուղարկվեն կառավարություններին՝ հետևյալ հանձնարարականով. ա) բարյացակամորեն վերաբերվել դրանց ընդունմանը և կիրառմանը պատժիչ հաստատություններում և բ) ամեն երեք տարին մեկ Գլխավոր քարտուղարին իրազեկ պահել այս կանոնների կիրառման ընթացքի մասին.

3. ցանկություն է հայտնում Գլխավոր քարտուղարին խնդրել, որպեսզի կառավարությունները կարողանան տեղյակ լինել տվյալ բնագավառի իրադարձություններին, «Քրեական քաղաքականության միջազգային տեսություն» հրատարակությունում հրապարակել 2 կետի համաձայն կառավարությունների կողմից ուղարկվող տեղեկությունը, ինչպես նաև նրան լիազորություններ ընձեռել խնդրելու լրացուցիչ տեղեկություններ, եթե դա անհրաժեշտ լինի.

4. նաև ցանկություն է հայտնում, որ Գլխավոր քարտուղարին խնդրանք ներկայացվի հնարավորին չափ լայնորեն հրապարակելու սույն կանոնները:

Հ ա վ ե լ վ ա ծ

ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԿԱՆՈՆՆԵՐ

Նախնական դիտողություններ

1. Ներքոհիշյալ կանոնները նպատակ չեն հետապնդում մանրամասն նկարագրելու տույժային հիմնարկների օրինակելի համակարգը, այլ նախատեսված են սոսկ շարադրելու այն, ինչը ժամանակակից մտքի հանրաճանաչ նվաճումները և ներկայիս առավել ընդունելի համակարգերի հիմնական տարրերը հաշվի առնելով, սկզբունքային և գործնական տեսակետից սովորաբար ճիշտ է համարվում բանտարկյալների հետ վարվեցողության և նշված հիմնարկների ղեկավարման բնագավառում:

2. Նկատի առնելով իրավական, տնտեսական և աշխարհագրական պայմանների բազմազանությունը, պարզ է, որ ոչ բոլոր կանոններն են հնարավոր կիրառել ամենուրեք և միաժամանակ: Սակայն նրանք պետք է կյանքի կոչեն իրենց իրականացման ճանապարհին եղած գործնական դժվարությունները հաղթահարելու մշտական ձգտումը, քանի որ նրանք ընդհանրապես և ամբողջությամբ արտացոլում են Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունելի համարվող նվազագույն պայմանները:

3. Մյուս կողմից, նրանք ընդգրկում են գործողության այն դաշտը, որտեղ մշտապես միտքն է առաջ ընթանում: Նրանք նպատակ չունեն խոչընդոտելու փորձերի անցկացմանը և պրակտիկայի ներդրմանը, որոնք համատեղելի են նրանցում նախանշված նպատակների նվաճմանը: Բանտային կենտրոնական վարչության համար այդ ոգով կանոններից շեղումը միշտ էլ արդարացված կլինի:

4. 1) Կանոնների I մասը վերաբերում է հիմնարկների ընդհանուր ղեկավարմանը և կիրառելի է բանտարկյալների բոլոր կատեգորիաների նկատմամբ, անկախ այն բանից՝ վերջիններս ձերբակալված են քրեական թե քաղաքական գործով, կամ գտնվում են միայն հետաքննության տակ կամ էլ դատապարտված են, ներառյալ այն բանտարկյալները, ովքեր դատավորների նշանակած «անվտանգության միջոցների» կամ ուղղիչ միջոցների կրող են հանդիսանում:

2) II մասում շարադրվում են հատուկ կատեգորիաների նկատմամբ կիրառելի կանոնները, որոնց մասին խոսվում է յուրաքանչյուր բաժնում առանձին: Սակայն Ա բաժնում ձևակերպված դատապարտված բանտարկյալներին վերաբերող կանոնները պետք է հավասարապես կիրառել և այն կատեգորիաների անձանց նկատմամբ, որոնց մասին խոսվում է Բ, Գ և Դ բաժիններում, պայմանով, որ դրանք չեն հակասում այդ կատեգորիաների համար մշակված կանոններին և բարելավում են իրավիճակը:

5) 1) Կանոնները նպատակ չունեն կանոնակարգելու մանկահասակների այնպիսի հիմնարկների ղեկավարումը, ինչպես Բորստալի հաստատությունը կամ ուղղիչ տներն են: Այնուամենայնիվ I մասը կարող է գործածություն գտնել նաև այդ հիմնարկներում:

2) Մանկահասակների շարքը պետք է դասել առնվազն այն բոլոր երիտասարդ բանտարկյալներին, ովքեր ենթակա են մանկահասակ հանցագործների համար նախատեսված դատարանի իրավասությանը: Իբրև կանոն, այդպիսի երիտասարդ անձանց պետք չէ դատապարտել ազատազրկման:

Մ Ա Ս I

ՀԱՄԱԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Ընդհանուր սկզբունք

6. 1) Ներքոնշյալ կանոնները պետք է կիրառել անաչառորեն: Ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնական, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ընտանեկան ծագման կամ սոցիալական դրության խտրականությունն անթույլատրելի է:

2) Մյուս կողմից, պետք է հարգել բնակչության այս կամ այն խմբին պատկանող բանտարկյալների կրոնական համոզմունքներն ու բարոյական նախադրույթները:

Գրանցում

7. 1) Բանտարկության բոլոր վայրերում պետք է լինի գրանցման գիրք՝ համարակալված էջերով կազմված մատյանի տեսքով, ուր պետք է գրանցվեն յուրաքանչյուր բանտարկյալի հետևյալ տվյալները.

ա) նրա անձին վերաբերող տեղեկությունները,

բ) նրա բանտարկման պատճառները և այդ մասին որոշում կայացրած իշխանությունների մատնանշումը,

գ) տվյալ բանտարկության վայրը ներկայանալու և այնտեղից նրա դուրս գալու օրն ու ժամը:

2) Ոչ ոք չի կարող բանտ ընդունվել առանց բանտարկության մասին իրական հրամանի, որի մանրամասները նախապես գրանցվում են գրքում:

Ըստ կատեգորիաների ստորաբաժանումը

8. Բանտարկյալների տարբեր կատեգորիաները պահվում են առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի առանձին մասերում, հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, նախնական դատվածությունը, բանտարկության իրական պատճառները և նրանց հետ նախատեսված վարվեցողությունը:

Այսպիսով,

ա) հնարավորության դեպքում կանանց և տղամարդկանց պետք է պահել առանձին հիմնարկներում,

բ) եթե կանայք և տղամարդիկ պահվում են նույն հիմնարկում, ապա կանանց պետք է տեղավորել կատարելապես առանձին մասնաշենքերում,

գ) չդատապարտված բանտարկյալներին պետք է տեղավորել դատապարտյալներից առանձին,

դ) այն անձանց, ովքեր դատվել են պարտքի հանձնառությունը չկատարելու համար, և քաղաքացիական գործերով մյուս բանտարկյալներին պետք է տեղավորել քրեական հանցագործություն կատարած անձանցից առանձին:

ե) մանկահասակ իրավախախտներին պետք է պահել մեծահասակներից առանձին:

Կառույցներ

9. 1) Այնտեղ, ուր բանտարկյալները գիշերում են խցերում կամ սենյակներում, նրանցից ամեն մեկը պետք է ունենա առանձին խուց կամ սենյակ: Եթե հատուկ պատճառներով, ինչպես օրինակ՝ բանտի ժամանակավոր ծանրաբեռնվածությունը, կենտրոնական բանտային վարչությունը ստիպված է հրաժարվել այդ կանոնի գործածությունից, միևնույն խցում կամ սենյակում երկու բանտարկյալների տեղավորելը ցանկալի չէ:

2) Այնտեղ, ուր կան ընդհանուր բանտախցեր, նրանցում տեղավորելիք բանտարկյալներին պետք է մանրակրկիտ կերպով ընտրել, որպեսզի համոզվածություն լինի, թե նրանք կարող են այդպիսի պայմաններում միասին ապրել: Գիշերները պետք է իրականացնել հիմնարկի բնույթին համատեղելի մշտական հսկողություն:

10. Բոլոր կառույցները, որոնցից օգտվում են բանտարկյալները, հատկապես ննջարանները, պետք է համապատասխանեն սանիտարական բոլոր պահանջներին, ընդ որում հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել կլիմայական պայմաններին, հատկապես այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը և օդափոխմանը:

11. Այն կառույցներում, ուր ապրում և աշխատում են բանտարկյալները,

ա) լուսամուտները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ և աշխատել ցերեկային լույսով, և պետք է նախագծված լինեն այնպես, որ ապահովեն թարմ օդի մուտքը, անկախ այն բանից, գոյություն ունի օդափոխման արհեստական համակարգ, թե ոչ:

բ) արհեստական լուսավորությունը պետք է բավարար լինի, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ կամ աշխատել առանց տեսողության համար վտանգի:

12. Սանիտարական հարմարությունները պետք է բավականաչափ լինեն, որպեսզի ամեն բանտարկյալ մաքրության և բարեկեցության պայմաններում կարողանա իր բնական պահանջները բավարարել, երբ անհրաժեշտ է:

13. Բաղնիքի սարքավորումները և ցնցուղների քանակը պետք է բավականաչափ լինեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա և պարտավոր լինի լողանալ կամ ջրցնցուղ ընդունել ամեն մի կլիմայի համապատասխան ջերմաստիճանում և այնքան հաճախ, որքան պահանջում են ընդհանուր հիգիենայի պայմանները՝ հաշվի առնելով տարվա եղանակը և աշխարհագրական շրջանը, այսինքն՝ չափավոր կլիմայում առնվազն շաբաթը մեկ անգամ:

14. Հիմնարկի բոլոր մասերը, որտեղից կանոնավորապես օգտվում են բանտարկյալները, պետք է միշտ պահվեն պատշաճորեն և ամենամաքուր ձևով:

Անձնական հիգիենա

15. Բանտարկյալներից պետք է պահանջել, որպեսզի նրանք իրենց մաքուր պահեն: Դրա համար նրանց պետք է մատակարարել ջուր և անհրաժեշտ պարագաներ՝ մաքրությանը և առողջությանը սատարելու համար:

16. Որպեսզի բանտարկյալները կարողանան պահպանել մարդկային արժանապատվությանը հարիր արտաքին տեսք, նրանց պետք է հնարավորություն տրվի հոգալ սանրվածքի և մորուքի մասին, տղամարդկանց թույլ տալ կանոնավորապես սափրվել:

Հագուստ և քնելու պարագաներ

17. 1) Քաղաքացիական հագուստ կրելու իրավունք չունեցող բանտարկյալներին պետք է հատկացնել տվյալ կլիմային համապատասխանող և իրենց առողջությունը բավարար վիճակում պահելու հնարավորություն տվող համազգեստ: Այն վիրավորող կամ ստորացնող բնույթ չպետք է ունենա:

2) Հագուստը պետք է պահվի մաքուր և կարգին վիճակում: Լվացքն ու մաքուր սպիտակեղենի տրամադրումը պետք է ապահովել հիգիենայի պահանջներին համապատասխան:

3) Բացառիկ դեպքերում, երբ բանտարկյալը թողնում է հիմնարկը իշխանությունների թույլտվությամբ, նրան պետք է թույլ տալ հագնելու սեփական կամ այլ՝ աչքի չզարնող, հագուստ:

18. Եթե բանտարկյալներին թույլատրվում է կրել քաղաքացիական հագուստ, ապա բանտարկության ընթացքում պետք է միջոցներ ձեռք առնել, որպեսզի այն լինի մաքուր և հարմար՝ կրելու համար:

19. Յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ապահովել ազգային և տեղական նորմերին համապատասխանող առանձին մահճակալով՝ քնելու առանձին պարագաներով, որոնք պետք է տալու պահին լինեն մաքուր, սարքին և փոխվեն բավականին հաճախ՝ դրանց մաքրությունն ապահովելու համար:

Սնունդ

20. 1) Բանտային վարչությունը պետք է սովորական ժամին յուրաքանչյուր բանտարկյալի ապահովի նրա առողջությունն ու ուժերը պահպանելու համար բավականաչափ սննդարար, լավորակ, լավ պատրաստված ու մատուցված սնունդով:

2) Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է խմելու ջուր ունենա, երբ զգա դրա անհրաժեշտությունը:

Մարմնական վարժանք և սպորտ

21. 1) Բոլոր բանտարկյալները, որոնք զբաղված չեն բացօթյա աշխատանքով, ունեն բակում ամենօրյա, գոնե մեկժամյա համապատասխան մարմնական վարժանքների իրավունք, եթե եղանակը տալիս է դրա հնարավորությունը:

2) Մանկահասակ և համապատասխան տարիքի մյուս բանտարկյալների համար, ովքեր գտնվում են համապատասխան մարմնական վիճակում, պետք է ապահովել մարզանքի և խաղերի հնարավորություն վարժություններին հատկացված ժամանակահատվածում: Դրա համար պետք է ունենալ անհրաժեշտ հրապարակներ, սարքեր և գույք:

Բժշկական սպասարկում

22. 1) Ամեն հիմնարկ իր տրամադրության տակ պետք է ունենա գոնե մեկ որակյալ, հոգեբուժության բնագավառում գիտակ բուժաշխատող: Բժշկական սպասարկումը պետք է կազմակերպել առողջապահության տեղական կամ պետական մարմինների հետ սերտ կապի մեջ: Այն պետք է ներառի հոգեբուժական ախտորոշման ծառայությունները, և այնտեղ, ուր անհրաժեշտ է, հոգեպես աննորմալ բանտարկյալների բուժումը:

2) Հիվանդ բանտարկյալներին, ովքեր մասնագետի ծառայության կարիք ունեն, պետք է տեղափոխել հատուկ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Բանտի հիվանդանոցները պետք է ունենան սարքեր, կայանքներ և

դեղամիջոցներ, որոնք անհրաժեշտ են հիվանդների պատշաճ խնամքի և նրանց բուժման համար, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ:

3) Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորություն ունենա օգտվելու որակյալ ատամնաբույժի ծառայություններից:

23. 1) Կանանց հիմնարկները պետք է ունենան հղի կանանց և ծննդկաններին խնամելու համար հատուկ մասնաշենքեր: Այնտեղ, ուր հնարավոր է, հարկ է հոգալ, որ ծննդաբերությունը լինի ոչ թե բանտային, այլ սովորական հիվանդանոցում: Իսկ եթե երեխան ծնվում է բանտում, ապա այդ մասին չպետք է հիշատակել ծննդյան վկայականում:

2) Այնտեղ, ուր բանտարկյալ մայրերին թույլատրվում է նորածիններին պահել իրենց մոտ, պետք է նախատեսել որակյալ անձնակազմ ունեցող մսուրների ստեղծում, որտեղ երեխաներին պետք է տեղավորել այն ժամանակ, երբ նրանք չեն օգտվում մայրերի հոգածությունից:

24. Բանտ ընդունելիս, և հետագա անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր բանտարկյալի պետք է ենթարկել բժշկական քննության, պարզելու համար նրա մարմնական և հոգեկան առողջությունը. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մեկուսացնելու բանտարկյալներին, եթե ենթադրվում է, թե նրանք տառապում են որևէ վարակիչ հիվանդությամբ, բացահայտել բանտարկյալների վերադաստիարակմանը խոչընդոտող մարմնական կամ մտավոր թերությունները և որոշել նրանց ֆիզիկական հնարավորություններն աշխատանքի հարցում:

25. 1) Բանտարկյալների մարմնական և հոգեկան առողջության մասին պարտավոր է հոգ տանել բժիշկը, որը պետք է ամեն օր ընդունի կամ այցելի հիվանդներին, նրանց, ովքեր գանգատվում են հիվանդությունից, ինչպես նաև նրանց, ում հանդեպ հատուկ ուշադրություն է անհրաժեշտ:

2) Յուրաքանչյուր անգամ, երբ բժիշկը գտնում է, որ բանտարկյալի մարմնական կամ մտավոր հավասարակշռությունը խախտվել է կամ սպառնում է խախտվել՝ ազատազրկման հետևանքով կամ բանտարկության պայմաններից որևէ մեկի հետ կապված, նա այդ մասին զեկուցում է տնօրենին:

26. 1) Բժիշկը պարտավոր է կանոնավորապես իրականացնել տեսչական ստուգում և տնօրենին զեկուցել հետևյալ հարցերի մասին.

ա) սննդի որակը, քանակը, պատրաստումը և բաշխման պայմանները,

բ) հիմնարկի և բանտարկյալների հիգիենան և մաքրությունը,

գ) սանիտարական պայմանները, ջեռուցումը, լուսավորումն ու օդափոխությունը հիմնարկում,

դ) բանտարկյալների հագուստի և քնելու պարագաների պիտանիությունն ու մաքրությունը,

ե) մարմնավարժության ու սպորտի վերաբերյալ կանոնների պահպանումն այն դեպքում, երբ այդ գործը դրված չէ մասնագիտացված անձնակազմի վրա:

2) Տնօրենը՝ 25 (2)-րդ և 26-րդ կանոնների համապատասխան պետք է ուշադրություն դարձնի բժշկի ուղարկած զեկուցագրերին ու խորհուրդներին և եթե ինքը համաձայն է վերջինիս հանձնարարականներին, պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի դրանք կենսագործելու համար: Եթե այդ հանձնարարականները դուրս են նրա իրավասության շրջանակներից կամ էլ ինքը համաձայն չէ դրանց հետ, ապա տնօրենը պետք է անհապաղ վերադաս մարմիններին ներկայացնի ինչպես իր սեփական զեկուցագիրը, այնպես էլ բժշկի հանձնարարականները:

Կարգապահություն ու պատիժներ

27. Պարտադիր է խստիվ պահպանել կարգապահությունը, կարգ ու կանոնը, կիրառելով միայն այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են հիմնարկում հսկողության հուսալիությունը և համակեցության հարկ եղած կանոնների պահպանումն ապահովելու համար:

28. 1) Բանտարկյալներին պետք չէ հենց հիմնարկի սպասարկման աշխատանքների նշանակել կարգապահական կարգով:

2) Սակայն այդ կանոնը չպետք է խոչընդոտի ինքնակառավարման համակարգի պատշաճ գործելուն, որի ժամանակ սոցիալական, դաստիարակչական կամ սպորտային գործունեության որոշակի ձևերի պատասխանատվությունը դրվում է հենց վերադաստիարակվելու նպատակով ստեղծված խմբերի կազմում հսկողության տակ աշխատող բանտարկյալների վրա:

29. Օրենքով կամ իրավասու վարչական իշխանությունների հանձնարարականներով պետք է մշտապես որոշվեն հետևյալ գործոնները.

ա) կարգապահական զանցանք համարվող վարքը,

բ) այն պատժի տեսակն ու տևողությունը, որին կարող է ենթարկվել բանտարկյալը,

գ) պատիժ նշանակելու իրավունք ունեցող մարմինը:

30. 1) Պատիժ կարելի է նշանակել միայն այդպիսի օրենքի կամ հանձնարարականների համաձայն, ընդ որում ոչ մի բանտարկյալ չի կարող կրկնակի պատժի ենթարկվել միևնույն զանցանքի համար:

2) Ոչ մի բանտարկյալ չի կարող պատիժ կրել, եթե նախապես չի տեղեկացվել այն զանցանքի մասին, որով իրեն մեղադրում են և չի ստացել իրեն արդարացնելու պատշաճ հնարավորություն: Իրավասու իշխանություններն այդ բնույթի յուրաքանչյուր գործ պետք է մանրազննին քննության ենթարկեն:

3) Այնտեղ, ուր դա անհրաժեշտ է և իրագործելի, բանտարկյալին պետք է թարգմանչի միջոցով սեփական պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն տալ:

31. Կարգապահական զանցանքների համար իբրև պատժաձևեր պետք է արգելել մարմնական պատիժները, չլուսավորվող խցում բանտարկելը և պատժի դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը ստորացնող ձևերի կիրառումը:

32. 1) Խիստ բանտարկության կամ սննդի կրճատում նախատեսող պատիժները կարելի է նշանակել միայն բժշկի կողմից բանտարկյալին հետազոտելուց հետո, որը պետք է գրավոր հաստատի, թե բանտարկյալն ի վիճակի է այդօրինակ պատիժ կրելու:

2) Դա վերաբերվում է նաև պատժի մյուս ձևերին, որոնք կարող են պատժվողին մարմնական կամ հոգեկան վնաս հասցնել: Այդպիսի պատիժները ոչ մի դեպքում չպետք է հակասության մեջ մտնեն 31-րդ կանոնի դրույթների հետ կամ շեղվեն դրանցից:

3) Բժիշկը պարտավոր է ամեն օր այցելել այդպիսի պատիժների ենթարկված բանտարկյալներին և, եթե անհրաժեշտ է համարում ընդհատել կամ փոխել պատիժը՝ բանտարկյալի մարմնական կամ հոգեկան վիճակի պատճառներով, իր կարծիքը հասցնել տնօրենի գիտությանը:

Զսպամիջոցներ

33. Որպես պատժամիջոց երբեք պետք չէ կիրառել այնպիսի զսպամիջոցներ, ինչպիսիք են ձեռնաշղթաները, կապանքները, զսպաշապիկներն ու շղթաները: Բացի այդ, կապանքներից ու շղթաներից ընդհանրապես չի կարելի իբրև զսպամիջոց օգտվել: Այլ զսպամիջոցներից կարելի է օգտվել միայն հետևյալ դեպքերում.

ա) տեղափոխելիս փախուստները կանխելու համար, այն պայմանով, որ բանտարկյալներն ազատվում են ձեռնաշղթաներից հենց որ նրանք կանգնում են դատական կամ վարչական մարմինների առջև,

բ) բժշկական բնույթի պատճառներով և բժշկի ցուցումով,

գ) տնօրենի հրամանով, եթե մյուս միջոցներն ի զորու չեն խանգարել բանտարկյալին վնասելու իրեն կամ այլոց, կամ էլ պատճառելու նյութական վնաս. այդպիսի դեպքերում տնօրենը պարտավոր է անհապաղ խորհրդակցել բժշկի հետ և զեկուցագիր ներկայացնել վերադաս վարչական մարմիններին:

34. Զսպամիջոցների կիրառման ձևերն ու մեթոդները սահմանում է բանտային կենտրոնական վարչությունը: Այդ միջոցները չպետք է կիրառել ավելի տևականորեն, քան խստիվ անհրաժեշտության դեպքում:

Բանտարկյալների իրազեկումը և նրանց կողմից բողոքների ներկայացումը

35. 1) Բանտ մտնելիս բանտարկյալին պետք է գրավոր տեղեկացնել իր կատեգորիայի բանտարկյալների հետ վարվեցողության կանոնների, տվյալ հիմնարկի կարգապահական պահանջների, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու թույլատրելի միջոցների և այլ հարցերի մասին, որոնք նրան հնարավորություն են ընձեռում գիտակցել իր իրավունքներն ու պարտականությունները և հարմարվել տվյալ հիմնարկի կենսապայմանների հետ:

2) Անգրագետ բանտարկյալներին տեղեկացնել հարկավոր է բանավոր ձևով:

36. 1) Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է աշխատանքային օրերին հիմնարկի տնօրենին կամ նրա լիազորած աշխատակցին դիմումներով կամ բողոքներով դիմելու հնարավորություն ունենա:

2) Տեսչական այցելության ժամանակ, հնարավորության դեպքում, բանտարկյալները պետք է ի վիճակի լինեն դիմումներով ու բողոքներով ներկայանալ բանտային տեսուչներին: Նրանք պետք է իրավունք ունենան խոսել տեսուչի կամ տեսչության մեկ այլ աշխատակցի հետ՝ հիմնարկի տնօրենի կամ մյուս աշխատակիցների բացակայությամբ:

3) Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորություն ունենա դիմել կենտրոնական բանտային վարչության մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմինների դիմումներով ու բողոքներով, որոնք գրաքննության ենթակա չեն բովանդակության տեսակետից, բայց պետք է կազմված լինեն պատշաճ ձևով և ներկայացվեն դրա համար նախատեսված ուղիներով:

4) Բացի այն դեպքերից, երբ նմանատիպ դիմումները կամ բողոքներն ունեն մակերեսային կամ վերացական բնույթ, դրանք ենթակա են անհապաղ քննության և դրանց պետք է պատասխանել առանց ավելորդ ձգձգումների:

Շփումն արտաքին աշխարհի հետ

37. Բանտարկյալներին պետք է հնարավորություն տալ ինչպես գրագրության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ:

38. 1) Բանտարկության մեջ գտնվող օտարերկրյա քաղաքացիների համար պետք է խելամիտ հնարավորություն ապահովել՝ կապ պահպանելու իրենց երկրների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների հետ:

2) Այն բանտարկյալները, ովքեր տվյալ պետության մեջ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն չունեցող երկրների քաղաքացիներ են, ինչպես նաև

փախստականներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, պետք է հնարավորություն ունենան կապ պահպանել այն պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հետ, որոնք վերցրել են նրանց շահերի պաշտպանությունը, կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

39. Բանտարկյալներին պետք է կանոնավորապես տեղեկացնել առավել կարևոր նորությունների մասին՝ թույլ տալով նրանց թերթեր, ամսագրեր կամ բանտային հատուկ հրատարակություններ կարդալ, ռադիո լսել, մասնակցել դասախոսությունների կամ օգտվել տեղեկատվության ցանկացած այլ միջոցներից, որոնք թույլատրելի են և վերահսկվում են վարչական մարմինների կողմից:

Գրքեր

40. Յուրաքանչյուր հիմնարկ պետք է գրադարան ունենա, որը հասանելի լինի բոլոր կատեգորիաների բանտարկյալների համար և պարունակի ինչպես զվարճալի, այնպես էլ կրթական բովանդակությամբ գրքեր: Պետք է խրախուսել բոլոր բանտարկյալների գրադարանից օգտվելը:

Կրոն

41. 1) Այն հիմնարկներում, ուր գտնվում են միևնույն դավանանքին պատկանող բավականաչափ բանտարկյալներ, պետք է նշանակել տվյալ պաշտամունքի որակյալ սպասավոր, կամ թույլատրել այնտեղ կատարելու համապատասխան կրոնական ծեսեր: Եթե նման բանտարկյալների թիվը բավականաչափ մեծ է և կան համապատասխան հնարավորություններ, այդպիսի սպասավորին պետք է մշտապես նշանակել:

2) 1-ին կետի հիման վրա հիմնարկում նշանակված կամ այնտեղ մտնելու թույլտվություն ստացած պաշտամունքի սպասավորը պետք է հնարավորություն ունենա կանոնավորապես կատարել կրոնական արարողություններ և, դրա համար հատկացված ժամանակում, միայնակ այցելել իր դավանանքին պատկանող բանտարկյալներին՝ կրոնական թեմաներով զրուցելու նպատակով:

3) Բանտարկյալներին չի կարելի զրկել ցանկացած դավանանքի որակյալ ներկայացուցիչների հետ հանդիպելու հնարավորությունից: Մյուս կողմից, եթե բանտարկյալը բողոքում է պաշտամունքի սպասավորի՝ իրեն այցելելու դեմ, ապա նրա ցանկությանը պետք է վերաբերվել լիակատար հարգանքով:

42. Իրագործելիության սահմաններում յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորություն ունենա բավարարել իր կրոնական պահանջմունքները, մասնակցելով կրոնական արարողություններին իր հիմնարկի ներսում և իր տրամադրության տակ ունենալով տվյալ դավանանքի հատուկ կրոնական գրքեր:

Բանտարկյալների ունեցվածքի պահպանում

43. 1) Դրամը, թանկարժեք իրերը, հագուստն ու այլ ունեցվածքը, որոնք ըստ տվյալ հաստատությունում գործող կանոնների, բանտարկյալն իրավունք չունի պահել իր մոտ, նրան ընդունելիս ի պահ են տրվում: Բանտարկյալը ստորագրում է այդ իրերի ցուցակը: Հարկավոր է միջոցներ ձեռնարկել, որպեսզի դրանք պահվեն հուսալի պայմաններում:

2) Տվյալ հիմնարկից բանտարկյալին ազատելիս նրան պատկանող ամբողջ ունեցվածքն ու դրամը պետք է վերադարձվեն, բացի այն գումարներից, որոնք նրան թույլատրվել է ծախսել, այն իրերից, որոնք նրան թույլատրվել է առաքել հիմնարկի սահմաններից դուրս, կամ էլ այն հագուստից, որը սանիտարական նկատառումներով անհրաժեշտ է եղել ոչնչացնել: Բանտարկյալը ստորագրություն է տալիս՝ իրեն պատկանող փողն ու իրերը հետ ստանալիս:

3) Նույնը վերաբերում է նաև այն բոլոր դրամական միջոցներին ու իրերին, որոնք բանտարկյալը ստանում է տվյալ հիմնարկում գտնվելու ժամանակ:

4) Եթե բանտարկյալն իր մոտ ունի դեղամիջոցներ, դրանց հետ վարվելու մասին որոշումը կայացնում է բժիշկը:

Ծանուցում մահվան, հիվանդության, տեղափոխման և այլնի մասին

44. 1) Բանտարկյալի մահվան, լուրջ հիվանդության, լրջորեն վիրավորվելու դեպքում կամ նրան հոգեբուժարան տեղափոխելիս, տնօրենն այդ մասին անհապաղ տեղեկացնում է նրա ամուսնուն կամ կնոջը, եթե այդպիսիք կան, նրա մերձավոր բարեկամներին և, համենայն դեպս, բանտարկյալի կողմից նախապես մատնանշված անձին:

2) Բանտարկյալին պետք է անհապաղ հայտնել իր մերձավորների մահվան կամ լուրջ հիվանդության մասին: Մերձավոր բարեկամի ծանր հիվանդության դեպքում բանտարկյալին թույլ է տրվում, ըստ հնարավորի, այցելել նրան՝ հսկողության տակ կամ առանց հսկողության:

3) Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է իրավունք ունենա անհապաղ տեղեկացնել ընտանիքի անդամներին՝ իր բանտարկության կամ մեկ այլ հիմնարկ տեղափոխվելու մասին:

Բանտարկյալների տեղափոխում

45. 1) Երբ բանտարկյալներն ուղարկվում են իրենց բանտարկության վայրերը կամ մի տեղից փոխադրվում են մեկ այլ տեղ, պետք է նրանց պատսպարել կողմնակի աչքից և ձեռնարկել բոլոր միջոցները՝ նրանց պաշտպանելու վիրավորանքներից, հետաքրքրասիրությունից և տարփողման ցանկացած ձևից:

2) Բանտարկյալների տեղափոխումն անբավարար օդափոխության կամ լուսավորման կամ էլ ցանկացած այլ ֆիզիկապես ծանր պայմաններում արգելվում է:

3) Բանտարկյալներին փոխադրում են վարչության հաշվին, ընդ որում նրանց տեղափոխումը պետք է կատարվի բոլորի համար միատեսակ պայմաններում:

Հիմնարկի անձնակազմ

46. 1) Բանտային վարչության մարմինները պետք է հոգ տանեն բոլոր կատեգորիաների անձնակազմերի մանրակրկիտ ընտրության համար, քանզի բանտային հիմնարկների լավ աշխատանքը կախված է այդ աշխատակիցների բարեխղճությունից, մարդասիրությունից, իրազեկությունից և անձնական հատկանիշներից:

2) Բանտային վարչակազմն իր աշխատակիցներին և ողջ հասարակայնությանն անընդհատ պետք է համոզի այն բանում, որ ինքը կատարում է հասարակական մեծ նշանակություն ունեցող գործ: Այդ համոզմունքն ամրապնդելու համար նա պետք է օգտագործի հասարակական տեղեկատվության հնարավորությունները:

3) Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար բանտային վարչակազմի աշխատակիցներին պետք է նշանակել աշխատանքային լրիվ ժամանակով, իբրև բանտային վարչության մասնագիտացված աշխատակիցներ, որոնք պետք է օգտվեն պետական ծառայողի կարգավիճակից և համոզված լինեն, որ լավ վարքի, աշխատանքի արդյունավետության և իրենց վրա դրված խնդիրներն իրագործելու ֆիզիկական ունակությունների առկայության դեպքում իրենց պաշտոնները կպահպանվեն: Նրանց աշխատավարձը պետք է սահմանել այն հաշվարկով, որ ներգրավվեն ու պահվեն այդ գործով զբաղվելու հնարավորություն ունեցող կանայք և տղամարդիկ: Նկատի առնելով տվյալ աշխատանքի բացառիկ դժվարությունները, այդ մարդկանց համար պետք է ապահովել աշխատանքի համապատասխան պայմաններ և արտոնություններ:

47. 1) Այդ անձնակազմը պետք է բավականաչափ կրթված ու զարգացած լինել:

2) Աշխատանքի ընդունվելուց առաջ անձնակազմի յուրաքանչյուր անդամի պետք է նախապատրաստել իր ընդհանուր և կոնկրետ պարտականությունների կատարմանը, որից հետո պետք է տեսական և գործնական ծրագրերի քննություններ պահանջել:

3) Աշխատանքի ընդունվելուց հետո և հետագա ամբողջ գործունեության ընթացքում այդ աշխատակիցները պետք է պահպանեն ու բարձրացնեն իրենց որակավորումը՝ համապատասխան պարբերականությամբ աշխատանքից չկտրված վերապատրաստման դասընթացներ անցնելով:

48. Բանտարկության վայրերի բոլոր աշխատակիցները պետք է իրենց պահեն և կատարեն պարտականություններն այնպես, որ օրինակ ծառայեն բանտարկյալների համար և նվաճեն նրանց հարգանքը:

49. 1) Հնարավորության դեպքում այդ հաստիքները պետք է մասնագետների բավականաչափ քանակ ընդգրկեն՝ հոգեբույժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, ուսուցիչներ և արհեստագործական ճյուղերի դասատուներ:

2) Սոցիալական աշխատողներին, ուսուցիչներին և արհեստագործական ճյուղերի դասատուներին պետք է նշանակել իբրև մշտական աշխատակիցներ, չխուսափելով սակայն ոչ լրիվ աշխատանքային օր աշխատող անձանց կամ հասարակական կարգով աշխատողների աշխատանքից:

50. 1) Հիմնարկների տնօրենների պաշտոններում պետք է նշանակել իրենց բնավորության, վարչական ունակությունների, պատրաստվածության և փորձի շնորհիվ բավականաչափ որակյալ անձանց:

2) Տնօրենն իր ամբողջ ժամանակը պետք է նվիրի իր վրա դրված պարտականությունների կատարմանը՝ աշխատելով լրիվ աշխատանքային հաստիքով:

3) Նա պետք է բնակվի իրեն վստահված հիմնարկի տարածքում կամ էլ մոտակայքում:

4) Երբ նույն տնօրենի վրա դրվում է երկու կամ մի քանի հիմնարկների վարման գործը, նա պետք է դրանցից յուրաքանչյուրն այցելի բավականին մեծ հաճախականությամբ: Այդ հիմնարկներից ամեն մեկի ղեկավարությունը հարկավոր է դնել տեղում բնակվող որևէ պատասխանատու աշխատակցի վրա:

51. 1) Տվյալ հիմնարկի տնօրենը, նրա տեղակալը և աշխատակիցների մեծամասնությունը պետք է իմանա այն լեզուն, որով խոսում է բանտարկյալների մեծամասնությունը կամ այն լեզուն, որը հասկանալի է նրանց մեծ մասին:

2) Այնտեղ, ուր անհրաժեշտ է, պետք է օգտվել թարգմանչի ծառայություններից:

52. 1) Այն հիմնարկներում, որոնց չափերն արդարացնում են լրիվ հաստիքով աշխատող մեկ կամ մի քանի բժիշկների ներկայությունը, վերջիններից գոնե մեկը պետք է բնակվի կամ հիմնարկում, կամ մոտակայքում:

2) Մյուս հիմնարկները բժիշկները պետք է այցելեն ամեն օր, ընդ որում բժիշկը պետք է բնակվի բավականին մոտ, որպեսզի ճգնաժամային դեպքերում հնարավոր լինի անհապաղ կանչել նրան:

53. 1) Այն հիմնարկներում, ուր պահվում են ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, վերջիններիս բաժանմունքը պետք է գտնվի իգական սեռի պատասխանատու աշխատակցի ղեկավարման ներքո, որի ձեռքում կլինեն տվյալ բաժանմունքի մուտքի բանալիները:

2) Արական սեռի աշխատակիցները կանանց բաժանմունք են մտնում միայն իգական սեռի աշխատակիցների ուղեկցությամբ:

3) Բանտարկության մեջ գտնվող կանանց մասին հոգ տանելը և հսկողությունը հարկավոր է դնել միայն իգական սեռի աշխատակիցների վրա: Սակայն դա չի կարող

խանգարել արական սեռի աշխատակիցներին, մասնավորապես բժիշկներին և ուսուցիչներին, կատարելու իրենց մասնագիտական պարտականությունները կանանց հիմնարկներում կամ այլ հիմնարկներում կանանց հատկացված բաժանմունքներում:

54. 1) Բանտարկյալների հետ իրենց հարաբերություններում հիմնարկների անձնակազմերը իրավունք ունեն ուժի դիմել միայն ինքնապաշտպանության կամ փախուստի փորձի դեպքում, ինչպես նաև բանտարկյալների կողմից գործող օրենքների կամ կանոնների վրա հիմնված հրամաններին ակտիվորեն կամ պասսիվ կերպով հակադրվելիս: Ուժի դիմող աշխատակիցները պարտավոր են մնալ չափավորության սահմաններում և նմանատիպ միջադեպերի մասին անհապաղ տեղեկացնել հիմնարկի տնօրենին:

2) Բանտերի աշխատակիցները պետք է ունենան հատուկ ֆիզիկական պատրաստվածություն, որը նրանց թույլ կտա սանձել հարձակողական մտադրություններ հանդես բերող բանտարկյալներին:

3) Այն աշխատակիցները, ովքեր իրենց պարտականությունները կատարում են բանտարկյալների հետ անմիջական շփման մեջ, պետք է զենք կրեն միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, զենք կրելու իրավունք պետք է ունենան միայն այն աշխատակիցները, ովքեր համապատասխան պատրաստություն են անցել:

Տեսչություն

55. Պատժիչ հաստատություններն ու ծառայությունները պետք է կանոնավոր տեսչական ստուգման ենթարկվեն որակյալ և փորձառու տեսուչների կողմից, որոնց նշանակում են իրավասու իշխանությունները: Տեսուչները մասնավորապես պետք է համոզված լինեն, որ բանտարկության վայրերը ղեկավարվում են ըստ գործող օրենքների և հրահանգների և որ նրանց աշխատանքը համապատասխանում է պատժիչ և ուղղիչ ծառայությունների առջև դրված խնդիրներին:

Մ Ա Ս II

ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

Ա. ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ

Ղեկավար սկզբունքներ

56. Ստորև շարադրվող ղեկավար սկզբունքներն արտացոլում են այն ոգին, որով պետք է ղեկավարվեն տույժային հիմնարկները, և այն նպատակները, որոնց իրականացմանն այդ հիմնարկները պետք է ձգտեն, ելնելով սույն տեքստի 1-ին նախնական դիտողությունից:

57. Բանտարկությունը և իրավախախտին շրջապատող աշխարհից մեկուսացնելու մյուս միջոցները նրան տառապանք են պատճառում, քանզի դրանք վերացնում են նրա ինքնորոշման իրավունքը, զրկում են նրան ազատությունից: Ուստի, բացի այն դեպքերից, երբ առանձնացումն արդարացված է և այդ են պահանջում կարգապահական ըմբռնումները, բանտային համակարգը պետք է խուսափի իրավիճակից բխող տառապանքներ պատճառելուց:

58. Բանտարկության կամ ընդհանրապես ազատազրկման դատապարտելու նպատակն ու հիմնավորումը, վերջին հաշվով, հասարակության պաշտպանություն են և հասարակայնությանը սպառնացող հանցագործությունների կանխում: Այդ նպատակներին կարելի է հասնել սոսկ այն դեպքում, եթե ազատազրկման ժամկետն ավարտելով և

հասարակության մեջ կանոնավոր կյանք վերադառնալով՝ իրավախախտը ոչ միայն պատրաստ է, այլև ունակ է ենթարկվել օրենսդրությանն ու ապահովել իր գոյությունը:

59. Այդ նպատակով հիմնարկը պետք է գործադրի բոլոր ուղղիչ, դաստիարակչական, բարոյական և հոգևոր ուժերն ու օգնության ձևերը, որոնց տիրապետում է և որոնք ինքը հարմար է գտնում, կիրառելով դրանք յուրաքանչյուր բանտարկյալի վերադաստիարակման պահանջները հաշվի առնելով:

60. 1) Հիմնարկում ընդունված ռեժիմը պետք է ձգտի բանտային և ազատ կյանքի միջև եղած տարբերությունը նվազագույնի հասցնել, քանի որ այդ տարբերությունը բանտարկյալի մեջ սպանում է պատասխանատվության զգացումը և մարդկային արժանապատվության գիտակցումը:

2) Ցանկալի է, որպեսզի պատժաժամկետը լրանալուց առաջ միջոցներ ձեռնարկվեն բանտարկյալին աստիճանաբար հասարակության մեջ վերադարձնելու համար: Այդ նպատակին կարելի է հասնել յուրաքանչյուր իրավախախտի յուրահատկությունները հաշվի առնելով, ազատվողների համար կամ հիմնարկի ներսում, կամ մեկ այլ հաստատությունում մտցնելով հատուկ ապրելակարգ, կամ էլ բանտարկյալին փորձաշրջանով ազատելով, որի ընթացքում նրանք, այնուամենայնիվ, մնում են հսկողության տակ, այն պայմանով, որ նման հսկողությունը չի դրվում ոստիկանական իշխանությունների վրա և համատեղվում է արդյունավետ սոցիալական օգնության հետ:

61. Բանտարկյալների հետ վարվեցողության ընթացքում պետք է ընդգծել ոչ թե նրանց բացառումը հասարակությունից, այլ այն հանգամանքը, որ նրանք շարունակում են մնալ նրա անդամները: Ուստի բոլոր այն տեղերում, երբ դա հնարավոր է, հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ է ներգրավել հիմնարկների անձնակազմի հետ համագործակցության մեջ՝ նպատակ ունենալով բանտարկյալների վերադարձը հասարակություն: Յուրաքանչյուր բանտային հիմնարկին կից հարկավոր է ունենալ սոցիալական աշխատակիցներ, ովքեր հոգ են տանում ընտանիքի հետ բանտարկյալի ցանկալի կապերի պահպանման ու ամրապնդման մասին և կարող են օգտակար լինել նրան՝ սոցիալական կազմակերպությունների միջոցով: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի բանտարկյալները կարողանան պահպանել քաղաքացիական շահերի, սոցիալական ապահովության և մյուս սոցիալական արտոնությունների բնագավառում օրենքի և իրենց դատավճռի պայմանների հետ համատեղելի իրավունքների առավելագույնը:

62. Հիմնարկի բժշկական ծառայությունները պետք է բացահայտեն այն բոլոր մարմնական և հոգեկան հիվանդություններն ու թերությունները, որոնք կարող են արգելք հանդիսանալ բանտարկյալի վերադաստիարակմանը և հոգ տանել դրանց բուժման համար: Այդ նպատակով հիմնարկները պետք է հնարավորություն ունենան ամենայն անհրաժեշտով ապահովել բժշկական, վիրաբուժական և հոգեբուժական սպասարկումը:

63. 1) Այդ սկզբունքների կենսագործումը պահանջում է անհատական մոտեցում բանտարկյալի նկատմամբ, հետևաբար՝ նրանց ըստ կատեգորիաների դասակարգման ճկուն համակարգ. ուստի ցանկալի է, որ այդպիսի կատեգորիաները տեղակայվեն դրանցից յուրաքանչյուրի հետ աշխատելու համար նախատեսված հիմնարկներում:

2) Այդ հիմնարկներում պարտադիր չէ անվտանգության միատեսակ միջոցառումներ ձեռնարկել յուրաքանչյուր խմբի համար: Ցանկալի է նույնիսկ աստիճանակարգել այդ միջոցառումների խստությունը՝ կախված կատեգորիայից: Մանրակրկիտ ընտրված բանտարկյալների վերադաստիարակման առավել բարենպաստ պայմաններ գոյություն

ունեն բաց հիմնարկներում, ուր հիմք են ընդունվում ոչ թե փախուստները կանխելու ֆիզիկական միջոցառումները, այլ ինքնակարգապահությունը:

3) Ցանկալի է, որ հիմնարկում պահվող բանտարկյալների թիվը շատ մեծ չլինի, որպեսզի նրանց հանդեպ հնարավոր լինի կիրառել անհատական մոտեցում: Որոշ երկրներում համարում են, որ նմանատիպ հիմնարկների բնակչությունը 500 մարդուց չպետք է գերազանցի: Բաց հիմնարկներում պետք է պահել որքան հնարավոր է քիչ բանտարկյալ:

4) Մյուս կողմից, բանտերը պետք է ունենան համապատասխան չափեր, որպեսզի նրանցում հնարավոր լինի պատշաճ միջոցներ և սպասարկում ապահովել:

64. Հասարակության պարտավորությունները բանտարկյալի ազատմամբ չեն դադարում: Ուստի անհրաժեշտ է ունենալ պետական կամ մասնավոր մարմիններ՝ ունակ գործուն հոգածություն հանդես բերելու ազատված բանտարկյալների նկատմամբ, պայքարելով այն նախապաշարումների դեմ, որոնց զոհ են նրանք և օգնելով նրանց կրկին ներգրավվել հասարակական կյանքում:

Բանտարկյալների հետ վարվեցողություն

65. Բանտային ազատազրկման կամ նմանատիպ մեկ այլ պատժաձևի դատապարտված անձանց հետ վարվեցողության ընթացքում պետք է ձգտել նրանց մեջ ցանկություն ներարկել օրենքներին ենթարկվելու և ազատվելուց հետո սեփական գոյությունն ապահովելու՝ հաշվի առնելով պատժաժամկետների տևողությունը: Նրանց հետ վարվեցողությունը պետք է ամրապնդի անհատական արժանապատվության զգացումը և սեփական պատասխանատվության գիտակցումը:

66. 1) Այդ նպատակով պետք է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ կրոնական սպասարկումն այն երկրներում, ուր հնարավոր է, ուսուցումը, մասնագիտական պատրաստումն ու կողմնորոշումը, կոնկրետ սոցիալական դեպքերի ուսումնասիրումը, աշխատանքի տեղավորման բնագավառում խորհրդատվությունը, ֆիզիկական դաստիարակությունն ու բնավորության ամրապնդումը, նկատի ունենալով բանտարկյալի անհատական պահանջմունքները, նրա սոցիալական անցյալը, հանցագործության պատմությունը, մարմնական և մտավոր ունակությունները և հնարավորությունները, խառնվածքը, ազատազրկման ժամկետի տևողությունը և ազատվելուց հետո նրա հնարավորությունները:

2) Բավականին երկար ժամկետի դատապարտված յուրաքանչյուր բանտարկյալի ընդունելիս տնօրենը նրա վերաբերյալ որքան հնարավոր է շուտ պետք է ստանա սպառիչ տեղեկություններ նախորդ կետում թվարկված հարցերի առնչությամբ: Այդ տեղեկությունները միշտ պետք է բովանդակեն հոգեբուժության մեջ հնարավորին չափ բանիմաց բժշկի զեկուցագիրը բանտարկյալի մարմնական և հոգեկան վիճակի մասին:

3) Այս զեկուցագրերը և բանտարկյալին վերաբերող մյուս փաստաթղթերը պետք է կարվեն նրա անձնական գործին: Վերջինս պետք է լրացնել բոլոր նոր տեղեկություններով և պահել այնպես, որպեսզի պատասխանատու աշխատողները կարողանան հարկ եղած դեպքում օգտվել դրանից:

Դասակարգում ու անհատականացում

67. Դասակարգման նպատակներն են՝

ա) բանտարկյալների առանձնացումը նրանցից, ովքեր իրենց հանցավոր անցյալի կամ բնավորության բացասական գծերի պատճառով նրանց վրա վատ ազդեցություն թողնել են սպառնում,

բ) բանտարկյալների բաժանումը ըստ կատեգորիաների, ինչը թեթևացնում է հասարակության մեջ վերադարձնելու նպատակով նրանց հետ կատարվող աշխատանքը:

68. Տարբեր կատեգորիաների բանտարկյալների հետ աշխատանքը պետք է տանել հնարավորության սահմաններում տարբեր հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի տարբեր բաժանմունքներում:

69. Յուրաքանչյուր բանտարկյալի ընդունելուց հետո ամենակարճ ժամկետում նրա բնավորությունն ուսումնասիրելու հիման վրա պետք է մշակել նրա հետ աշխատանքի ծրագիր, ելնելով անհատական պահանջմունքներից, ընդունակություններից ու հակումներից:

Արտոնություններ

70. Յուրաքանչյուր հիմնարկում պետք է ունենալ արտոնությունների համակարգ և տարբեր կատեգորիաների բանտարկյալների հետ վարվեցողության տարբեր մեթոդներ մշակել, որպեսզի խրախուսվի նրանց լավ վարքը, նրանց մեջ պատասխանատվության զգացում զարգացվի, ներարկվի վերադաստիարակվելու հետաքրքրասիրություն և ձեռք բերվի նրանց համագործակցությունը:

Աշխատանք

71. 1) Բանտարկյալների աշխատանքը չպետք է տառապանք պատճառի նրանց:

2) Բոլոր դատապարտված բանտարկյալները պարտավոր են աշխատել բժշկի կողմից հաստատված մարմնական և հոգեկան ընդունակություններին համապատասխան:

3) Բանտարկյալներին պետք է այնքան օգտակար աշխատանք հանձնարարել, որ կանոնավոր բանվորական օր լրանա:

4) Բանտարկյալների համար ապահովվող աշխատանքը հնարավորության սահմաններում պետք է լինի այնպիսին, որ բարձրացնի նրանց որակավորումը կամ որակավորում տա նրանց, ինչը թույլ կտա ազատվելուց հետո զբաղվել ազնիվ աշխատանքով:

5) Այն բանտարկյալներին, ովքեր ունակ են դրանից օգուտ քաղել, պետք է սովորեցնել օգտակար արհեստներ՝ հատկապես փոքրահասակներին:

6) Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան աշխատել իրենց հայեցողությամբ, եթե դա համատեղելի է արհեստների կանոնավոր ընտրության, վարչության պահանջների և հիմնարկի կարգ ու կանոնի հետ:

72. 1) Հիմնարկներում աշխատանքի կազմակերպումն ու մեթոդները պետք է առավելագույնս մերձենան այն ամենին, ինչն ընդունված է դրանց պատերից դուրս, որպեսզի բանտարկյալները սովորեն ազատության մեջ աշխատանքի պայմաններին:

2) Սակայն բանտարկյալների շահերն ու նրանց մասնագիտական պատրաստվածությունը չպետք է ստորադասել բանտային արտադրությունից շահույթի ստացման մտադրություններին:

73. 1) Հիմնարկներում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ղեկավարումն ավելի լավ է դնել բանտային վարչության, այլ ոչ թե մասնավոր կապալառուների վրա:

2) Այն բանտարկյալները, ովքեր հիմնարկի կողմից չհսկվող աշխատանք են կատարում, պետք է գտնվեն հիմնարկի աշխատակիցների մշտական հսկողության տակ: Բացի առանձին դեպքերից, երբ բանտարկյալներն աշխատում են կառավարական այլ հաստատությունների համար, գործատուները պարտավոր են հիմնարկին վճարել համապատասխան աշխատանքի համար սահմանված աշխատավարձ լրիվ հաստիքով, ընդ որում՝ հաշվի առնելով բանտարկյալների աշխատանքի արտադրողականությունը:

74. 1) Ազատ բանվորների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման կանոնները պետք է կիրառվեն նաև բանտային հիմնարկներում:

2) Արտադրության մեջ խեղանդամվելու կամ մասնագիտական հիվանդություններ ձեռք բերելու դեպքում բանտարկյալներին պետք է փոխհատուցում վճարել: Վերջինիս պայմանները պետք է լինեն ոչ պակաս նպաստավոր, քան ազատ բանվորների համար օրենքով նախատեսված փոխհատուցման պայմաններն են:

75. 1) Բանվորական օրվա կամ շաբաթվա առավելագույն տևողությունը սահմանվում է օրենքով կամ վարչական որոշումների հիման վրա՝ հաշվի առնելով ազատ բանվորների աշխատապայմանների բնագավառում տեղական կանոններն ու սովորույթները:

2) Աշխատաժամանակը պետք է բաշխել այնպես, որ բանտարկյալները շաբաթվա մեջ ունենան գոնե մեկ հանգստյան օր և բավականաչափ ժամանակ՝ իրենց վերադաստիարակման նպատակով անհրաժեշտ ուսման և գործունեության համար:

76. 1) Իրենց աշխատանքի դիմաց, որոշակի համակարգի շրջանակներում բանտարկյալները պետք է արդարացի վարձատրություն ստանան:

2) Այդ համակարգին համապատասխան բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան իրենց աշխատած գումարի գոնե մի մասը ծախսել անձնական օգտագործման թույլատրելի առարկաներ ձեռք բերելու համար, իսկ աշխատավարձի մի մասն էլ ուղարկել ընտանիքին:

3) Այդ համակարգը պետք է նախատեսի նաև, որ բանտարկյալների աշխատած փողի մի մասը մնա վարչակազմի պահպանության տակ, որն էլ ազատման պահին այդ խնայողությունները կվերադարձնի նրանց:

Կրթություն ու հանգիստ

77. 1) Այն բանտարկյալներին, ովքեր ընդունակ են դրանից օգուտ քաղել, պետք է կրթության հնարավորություն ընձեռել, ներառյալ կրոնական դաստիարակությունն այն երկրներում, որտեղ դա թույլատրվում է: Անգրագետների և երիտասարդների ուսուցումը պետք է պարտադիր համարել, և բանտային վարչության մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն դրան:

2) Բանտարկյալների ուսուցումը հնարավորին չափ պետք է կապակցել երկրում գործող կրթական համակարգին, որպեսզի ազատվող բանտարկյալները կարողանան հետագայում էլ սովորել առանց դժվարությունների:

78. Բոլոր հաստատություններում բանտարկյալների համար հարկավոր է հանգստի և մշակութային գործունեության հնարավորություն ապահովել՝ ի շահ նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության:

Կապն արտաքին աշխարհի հետ և խնամակալությունն ազատվելուց հետո

79. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բանտարկյալի և նրա ընտանիքի միջև կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, ինչը ցանկալի է դիտվում և ծառայում է երկու կողմերի շահերին:

80. Պատժաժամկետն անցկացնելու հենց սկզբից հարկավոր է մտածել ազատազրկվելուց հետո բանտարկյալին սպասող ապագայի մասին: Ուստի պետք է օգնել նրան՝ հիմնարկի պատերից դուրս գտնվող անձանց կամ հաստատությունների հետ կապերը հաստատելու և ամրապնդելու, որոնք ի վիճակի են պաշտպանել նրա ընտանիքի շահերը և, ազատվելուց հետո, աջակցել հասարակական կյանքին նրա ընդգրկմանը:

81. 1) Կառավարական կամ այլ մարմիններն ու հաստատությունները, որոնք ազատված բանտարկյալներին օգնում են հասարակության մեջ իրենց տեղը գտնելու այնտեղ, ուր

հնարավոր է և անհրաժեշտ, պետք է հոգ տանեն, որ այդպիսի բանտարկյալները անձը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր ու վկայականներ ստանան, համապատասխան բնակարան և աշխատանք գտնեն, ունենան տվյալ կլիմային ու տարվա եղանակին հարմար հագուստ և այնքան միջոցներ, որը բավարար է նշանակման վայրը մեկնելու և ազատվելուն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում ապրելու համար:

2) Նմանօրինակ հաստատությունների լիազորված ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան բանտային հիմնարկներ և նրանցում բանտարկված անձանց այցելելու: Այդ հաստատությունների հետ հարկավոր է խորհրդակցել բանտարկյալների հետագա կյանքի հեռանկարների մասին՝ նրանց ազատազրկման հենց սկզբից:

3) Ցանկալի է, որպեսզի այդ հաստատությունների աշխատանքը կենտրոնացվի կամ համաձայնեցվի հնարավորի սահմաններում, որպեսզի ապահովվի նրանց աշխատանքի առավելագույն արդյունավետ օգտագործումը

Բ. ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ

82. 1) Հոգեկան հիվանդ համարվող անձանց չպետք է բանտարկել: Ուստի հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել նրանց հոգեբուժարան տեղափոխելու համար:

2) Այլ հոգեկան հիվանդություններով կամ թերություններով տառապող բանտարկյալներին պետք է պահել հսկողության տակ և բուժել հատուկ հիմնարկներում, բժիշկների ղեկավարությամբ:

3) Բանտում գտնվելու ընթացքում այդպիսի բանտարկյալները պետք է բժշկական հատուկ հսկողության տակ լինեն:

4) Պատժիչ հիմնարկներին կից գործող բժշկական և հոգեբուժական ծառայությունները պետք է ապահովեն դրա կարիքը ունեցող բոլոր բանտարկյալների հոգեկան բուժումը:

83. Իրավասու հաստատությունների հետ համագործակցելիս, անհրաժեշտության դեպքում, ցանկալի է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար ազատված բանտարկյալների հոգեբուժական խնամքը, ինչպես նաև նրանց սոցիալ-հոգեբուժական խնամակալությունը:

Գ. ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՊԱՍՈՂ ԱՆՁԻՆՔ

84. 1) Քրեական հանցագործության մեղադրանքով ձերբակալված կամ բանտարկված անձինք, ովքեր պահվում են ոստիկանական տեղամասերում կամ բանտային հիմնարկներում, բայց դեռևս չեն կանչվել դատարան ու չեն դատապարտվել, ներքոհիշյալ կանոններում անվանվում են «հետաքննության ենթակա» բանտարկյալներ:

2) Հետաքննության ենթակա բանտարկյալներն անմեղ են դիտվում և նրանց հետ պետք է վարվել համապատասխանաբար:

3) Այն պայմանով, որ պետք է պահպանվեն անձի ազատությանը վերաբերող օրենսդրությունը կամ հետաքննության ենթակա բանտարկյալների հետ վարվեցողության ընթացակարգը որոշող օրենքները, նման բանտարկյալների հանդեպ չպետք է հատուկ ապրելակարգ կիրառել, որի հիմնական բնութագրերը շարադրվում են ներքոհիշյալ կանոններում:

85. 1) Հետաքննության ենթակա բանտարկյալներին պետք է պահել դատապարտվածներից առանձին:

2) Հետաքննության տակ գտնվող երիտասարդ բանտարկյալներին անհրաժեշտ է պահել մեծահասակներից առանձին և սկզբունքորեն առանձին հիմնարկներում:

86. 1) Գիշերը հետաքննության ենթակա բանտարկյալներին պետք է տեղաբաշխել միայնակ և առանձին կացարաններում, հաշվի առնելով, սակայն, կլիմայական պայմաններով բացատրվող տեղական առանձնահատկությունները:

2) Երբ հիմնարկում ընդունված կարգը չի խախտվում, հետաքննության ենթակա բանտարկյալներին կարելի է թույլատրել, եթե նրանք կամենում են, կողմնակի սնունդ ստանալ իր հաշվին կամ բանտային վարչության մարմինների միջոցով, կամ էլ իր ընտանիքի անդամների ու ընկերների միջոցով: Հակառակ դեպքում բանտարկյալի սնունդն ապահովում է վարչակազմը:

88. 1) Հետաքննության ենթակա բանտարկյալներն իրավունք ունեն քաղաքացիական հագուստ կրել, պայմանով, որ այն պահվի մաքուր և ունենա վայելուչ տեսք:

2) Եթե հետաքննության տակ գտնվող բանտարկյալը կրում է բանտային համազգեստ, այն պետք է տարբերվի դատապարտվածի համազգեստից:

89. Հետաքննության ենթակա բանտարկյալներին միշտ պետք է ընձեռել աշխատելու հնարավորություն: Բայց աշխատանքը նրանց համար պարտադիր չի համարվում: Եթե այդպիսի բանտարկյալը որոշի աշխատել, նրա աշխատանքը պետք է վճարվի:

90. Հետաքննության ենթակա բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան սեփական միջոցներով կամ երրորդ անձանց հաշվին ձեռք բերել գրքեր, թերթեր, գրենական պիտույքներ կամ այլ իրեր, որոնք հնարավորություն են տալիս նրանց ժամանակ անցկացնել, պայմանով, որ դրանք համատեղելի են արդարադատության իրագործման պայմանների, հիմնարկում կյանքի կանոնավոր ընթացքի և անվտանգության պահանջների հետ:

91. Հետաքննության ենթակա բանտարկյալներին հարկավոր է թույլ տալ բանտում գտնվելու ընթացքում օգտվել իրենց բժշկի կամ ատամնաբույժի ծառայություններից, եթե այդ մասին նրանց խնդրանքն արդարացված է և եթե նրանք ի վիճակի են փակել դրա հետ կապված ծախսերը:

92. Հետաքննության ենթակա բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ընտանիքին անհապաղ տեղեկացնել իրենց բանտարկության փաստի մասին, օգտվել բարեկամների ու ընկերների հետ հանդիպելու բանական հնարավորությունից, նրանց ընդունելով բանտում, ենթարկվելով միայն այն սահմանափակումներին ու հսկողությանը, որոնք անհրաժեշտ են արդարադատությունը պատշաճորեն իրականացնելու, հիմնարկում աշխատանքի կանոնավոր ընթացքն ապահովելու և անվտանգության պահանջները պահպանելու համար:

93. Այնտեղ, ուր հնարավոր է, հետաքննության ենթակա բանտարկյալները պետք է ունենան անվճար իրավաբանական խորհրդատվության հնարավորություն՝ բանտում ընդունելու այն իրավաբան-խորհրդականին, որն իր վրա է վերցրել նրանց պաշտպանությունը, ինչպես նաև գաղտնի հրահանգներ նախապատրաստելու և նրան փոխանցելու իրավունքը: Այդ նպատակով հարկավոր է նրանց պահանջով տրամադրել գրենական պիտույքներ: Բանտարկյալի հանդիպումն իր իրավաբան-խորհրդականի հետ պետք է անցնի ոստիկանական կամ բանտային մարմինների աշխատակիցների աչքի առաջ, բայց նրանց լսելիության սահմաններից դուրս:

Դ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ

94. Այն երկրներում, ուր օրենքը թույլատրում է բանտարկություն պարտքի հանձնառություն չկատարելիս, կամ էլ դատարանի որոշմամբ՝ ցանկացած այլ քաղաքացիական գործի առնչությամբ, այդ կարգով բանտարկված անձանց չպետք է ենթարկել առավել խիստ վարվեցողության, քան այն, ինչն անհրաժեշտ է հուսալի հսկողության և պատշաճ կարգ ու կանոնը պահպանելու համար: Այդպիսի անձանց նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի ոչ պակաս փափուկ, քան վերաբերմունքը հետաքննության ենթակա բանտարկյալների հանդեպ, միայն այն տարբերությամբ, որ նրանց աշխատանքը կարող է լինել պարտադիր:

Ե. ԱՌԱՆՑ ՄԵՂԱԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԲԱՆՏՈՒՄ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ

95. Չխախտելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի դրույթները, այն անձանց, ում ձերբակալել կամ բանտ են նստացրել առանց մեղադրանք հարուցելու, ներկայացվում է նույն պաշտպանությունը, ինչը ներկայացված է I և II մասերի Գ բաժնի գծով: II մասի Ա բաժնի համապատասխան դրույթները ևս կիրառելի են այն դեպքերում, երբ դրանց գործածությունը կարող է օգտավետ լինել այս հատուկ խմբի անձանց համար, որոնք գտնվում են կալանքի տակ, պայմանով, որ չեն ձեռնարկվի այնպիսի միջոցներ, որոնք ենթադրում են, թե ուղղման կամ վերադաստիարակման մեթոդները կիրառելի են որևէ քրեական հանցագործության համար չդատապարտված անձանց վերաբերյալ:

37. A/CONF/6/1, հավելված I, A: